

Արմագեան. Օդում. 17. 1879. № 384.

Կոնդակ, որով կհաստատէ հոգաբարձուներ Բըլիսէր զիւղում նոր զպրոց կառուցանելու և կառավարելու Գ. Յովսէփեան, Յ. Մկրտչեան, Բ. Աս-լանեան և Խ. Ալեքրեան: Օգոստ. 17, 1879, № 385:

Կոնդակ, որով կհաստատէ Յափնա զիւղում նոր դպրոց կառուցանելու և կառավարելու հոգաբարձուներ Յակ. քահ. Դ. Առնջեան, Մ. Գասպարեան, Բ. Թոմասեան և Յ. Յովեանեան. Օգոստ. 17, 1879, № 386.

Կոնգակ օրհնութեան Պօղոս - քիլիսեցի Յով. Կիրակոսեանին Մէծ Պարագիլիսա գիւղի ծխական դպրոցին 200 մ. Նուիրելու համար. Օգոստ. 30, 1879, № 410.

Կոնգակի, որ խաչանշան կրելու իրաւունք կշնորհէ Ներ. քահ. Ըմառօնեանին Փարպի զիւղում ծխական դպրոց հիմնելու համար ունեցած աշխատութեան համար. Սեպտեմբ. 13, 1879, № 417:

Կոսդակ Կ. Պօլսի գպրոցասէրների Արևելեան ընկերութեան անդամներին որոնք Տարօնի, Բաղէշի և Բազրը և անդի կողմերում զպրոցներ կրանան այժմ և կինդրեն Վեհափառ Հայրապետի պաշտպանողական հովանաւորութիւնն ընկերութեան համար: Վեհափառ Կաթողիկոսը իւր սրբազն պարտք համարելով օգնել և խրախուսել ամենայն ազգօգուտ ընկերութիւններ, որոնք անկեղծութեամբ կգոտեռովին ազգի պէտքերը և օգուտը արդիւնաւորելու, կխոստանայ իւր խնամքը և օժանդակութիւնը, ասելով այս մասին յառաջադրյն և ընկերութեան ատենազպրին, որ յատկապէս եկած էր ամառն Բիւրական, Յովչաննէս Շահնազարեանին, պատուիրելով միանգամայն ուսման հետ առաւելապէս արդիւնաւորել Հայաստանի մանուկների բարոյական դաստիարակութիւնը բարեբարոյ և բարեկիրթ ուսուցիչների հսկողութեամբ: Վեհափառ Տէրն օրհնելով և բարեմազմութիւններ հայցելով ազգին և եկեղեցուն անձնուիրաբար սիրողներին և ծառայօղներին և գովելով ընկերութեան գեղեցիկ նպատակը և ուսումնածւալ վաստակները, կյորգորէ Ս. Հոգու սիրով քաջալերվիլ, անձնանուէր յարատելով չվահատիլ գործի գծուարութիւններից, այլ միարան սիրով և համակամ ձեռնատուութեամբ միմեանց աջակցած յուսալով Աստուածապաշտութեամբ և բարի նպատակներով վառվածներին օգնական Յիսուսին, քաջութեամբ տանել ամենայն դժուարութիւններին և յաղթական պասկ ստանալ: Անպատճմբերի 25, 1879, № 439:

Ա. ԵՀՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԳԻ ՕՐԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԵՄՆԵՐ.

Կ 25 յունիսի 1879 ամի. Առ յայտարարութիւն գերապատիւ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի ծանուցանել նմա թէ հանդամանք և խառն զրութիւնք գործոց ընդարձակ վիճակին Վրաստանի պահանջնեն անշուշտ ներկայութիւն նորին գերապատութեանն, մանաւանդ զի ի վիճակին Տփխիսու, այն է ի Փոթի գտանի ծով ընդարձակ և կից նմին Սօխում-խալէ և ի շաջակայսն

գտանի նոյնպէս ծով՝ ուր և նորին գերապատութիւնն կարէ զիմել ի լողանալ անդ ի ծովային ջուրս և լուսանալ զզլուխ իւր հանապազ, իսկ եթէ հարկ անհրաժեշտ պահանջէ գնալ ըստ Խորհրդոց բժշկաց ի ծովային ջուրս Խրիմու, յայն դէպս Սինօդս ըստ Խնդրանաց նորա թոյլատրէ նմա գնալ անդր ծախուք իւրովք:

Ի 25 յունիսի 1879 ամի. Առ ներկայ յայտարարագիր Առաջնորդին Կառ ըուց տալ զիսել՝ զի նորին գերապատութիւնն պարտ էր ունել զիսյթ գրաւել զյիշեալ եկեղեցին իսկզբան անդ տիրապետութեանն. իսկ զարդիս համարելով ընաւ տարադէպ իմն առնել ըստ այնմ զոր և իցէ առաջարկութիւնն, զգուշացուցանել միանգամայն զնորին սրբազնութիւնն ի սոյն պիսի կարեռագոյն խնդիրս լինել առ յապայն արի և աչալուրջ զի մի իրաւունք եկեղեցւոյն անցցին ի կորուստ:

Ի 25 յունիսի 1879 ամի. Ըստ որում զներքին բարեկարգութիւն Սանահնոյ և գտեալ ի նմին վանական զպրոցին պարտականութիւն է հոգալ թեմական տեսչութեան, ուստի և պատուիրել Կոնսիստորիին, զի եթէ գտանէ փոխաղբութիւն անդր Գեղամ արեղայի և կարգումն նորա ի պաշտօն ուսուցչութեան անյարմար, կարէ ապաքէն տնօրինել, զոր ըստ իւրումն նկատողութեան ծանիցէ յաւէտ յարմարաւոր յօգուտ վանուցն և զպրոցին:

Ի 25 յունիսի 1879 ամի. Զինդրագիր կառավարչի Սուրբ Խաչ վանուց Նոր - Նախիջևանի, Յովհաննիսի Պօպեան և զբացատրութիւն ընդդէմ այնր տնտեսական կառավարութեան վանուցն առաքել առ գերապատիւ առաջնորդ թեմին Մակար Արքեպիսկոպոսն, յանձնել նմա առնել զջիշտ վերահասութիւն հանգամանաց բացատրելոց ի նոսին, և ըստ մերձաւոր նկատողութեան իւրում տնօրինել զպատշաճն որ ինչ վերաբերի օդտի և միանգամայն վանական դպրոցին:

Ի 25 յունիսի 1879 ամի. Որովհետեւ առաջարկութիւն նորին գերապատութեան Առաջնորդին Աստրախանայ է տարօրինակ իմն և հակառակ կանոնաց Հայաստաննեայց սուրբ եկեղեցւոյ, ըստ որոց պսակն անլուծանելի է ցորչափ կենդանի իցէ մինն յամուսնացելոց անտի, ուստի թողլով զայն առանց հետեանաց, յաւելու ի զիտութիւն նորին գերապատութեան թէ նա, ըստ իւրումն կոչման և պարտաւորութեան, պարտէր անդէն անդ բացասել նմին, յորդորելով միանգամայն զամուսնացեալսն տանել համբերութեամբ ձախողակ զիսպուածոց ամուսնական կենաց ըստ անզրդելի խոստման իւրեանց առաջի սրբոյ սեղանոյն և մի՛ առնել բնաւ զայսպիսի անտեղի առաջարկութիւնս հակառակ մտաց եկեղեցական օրինաց և ամուսնական պարտուց:

Ի 25 յունիսի 1879 ամի. Ունելով ի նկատի, զի Յարութիւն քահանայն Սհարբեկեան առանց լուծման հոգեոր իշխանութեան և կանխազէտ լիալ չհասական աստիճանի ազգականութեան ընդ մէջ Միքայէլի Մայիլեան և Սօնագիւլի Մովսիսեան, վստահացեալ է զնել ի վերայ նոցա զպսակ հակառակ օրինաց և կանոնաց Հայաստաննեայց եկեղեցւոյ ակնարկմամբ:

յանդրնօրէն ի կարգընկեցութիւն իւր, ուստի ենթարկել զնա երկամեայ ապաշխարանաց ի վանս Սաղիանու առ ի քաւել անդ զյանցանս իւր պահոք և աղօթիւք, և յետ լրանալոյ սահմանեալ միջոցին ապաշխարանացն պարտաւորել զնա յատենի Կոնսիստորին ստորագրութեամբ, զի մի՛ ևս վստահացի առնել զայնպիսի տարականոն գործս, երկնչելով ի խստագոյն պատժապարտութենէ և ապա թոյլատրել նմա հովուել զժողովուրդ իւր. իսկ զարդիւնս ծիսոց նորա յընթացս ժամանակի ապաշխարութեանն բաժանել յերիս հաւասար մասունս զիֆնն յատկացուցանել ի գանձարանն Կոնսիստորին զերկրորդն ի տեղի նորա հովուող քահանային և զերրորդն ի նպաստ ընտանեաց յիշեալ պատժապարտեալ քահանային, և զպսակեալն գնել ի ներքոյ 40 օրեայ ապաշխարանաց որպէս զի պահօք և աղօթիւք մաքրեցեն զիսիղձ իւրեանց և ապա միասցին ամուսնական պարտաւորութեամբ: Իսկ եզրակացութիւն Կոնսիստորին որ վասն յանդիմանութեան ներսէս քահանայի Տէր Բաղդասարեան թողուլ յիւրումն զօրութեան: Զայսմանէ հրամանագրել կոնսիստորիային Շամախոյ վասն պարտուպատշաճն տնօրէնութեան պատուիրելով զկատարմանէ ծանուցանել Սինօդիս ի ժամուն:

Ի 25 յունիսի 1879 ամի. Յանձնել վերատեսչի ծխական երկսեա գպրոցաց Հայոց Վազարշապատու բարեշնորհ Խորէն վարզապետի Սաեփանէ հրաւիրել զժողովոդականս տեղւոյն և առաջադրել նոցա զի նորա ընտրեցեն ի միջոյ իւրեանց զհարկաւորեալ թիւ պատգամաւորաց որոց և տալ զիրաւունս յիւրեանց կողմանէ ժողովել և ընտրել զնոր հոգաբարձուս տղայոց դըպրոցին, և զընտրողական թուղթն նորընտիր հոգաբարձուացն ստորագրութեամբ ընտրողացն մատուցանել ի հաստատութիւն Առհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց: Իսկ զարարեալ ծառայութիւնս հին հոգաբարձուաց յօդուտ դպրոցին ըստ կոնդակի նորին Սրբութեան յընթացս եօթն ամաց մուծանել ի ցուցակս ծառայութեանց նոցին վասն տեղեկութեան և ապագայ հարկաւորութեան:

Ի 25 յունիսի 1879 ամի. Որովհետև հաւասարի է Սինօդս, զի Սահունեան Իսահակ աւագ քահանայն ի պատճառս զառամութեան դժուարանսյ կատարել զքահանայական պարտաւորութիւն և ընդ նմին բաւական համարելով զվեցամնեաց ապաշխարանս եղեալս ի վերայ Յովհաննէս աւագ քահանային Թէմուրազեան, հրամանագրել Կոնսիստորին Արատանի զթէմուրազեան քահանայն ըստ տնօրէնութեան Սինօդիս թողուլ յօդնականութեան զառամեալ Սահունեան աւագ քահանային, ընդ նմին և խոյս կալ միանգամայն ի փոխազրութենէ քահանայից որոյ վասն Սինօդս քանի՞ քանիցս կրկնեալ է նմին:

Ի 27 յունիսի 1879 ամի. Որովհետև բարձումն անպատշաճ պատկերաց յեկեղեցւոյն Սարուշէն գեղջ վիճակին Արաբազու լեալ է տնօրէնութեամբ փոխանորդին և ըստ հաւասարութեան նորին բանք զընթացից նոյն քահանային են զըպարտութիւն յառաջացեալ ի չարասէր զրդմանց վասնորոյ

զինդրագիր Սարուշենցւոց թողով առանց հետեանաց, զորմէ և ծանուցանել նոցա միջոցաւ Կոնսիստորին Դարարադու:

Ի 27 յունիսի 1879 ամի. Առ ներկայ գրութիւն Նահանգապետին Ելիսաւէտապօլու ծանուցանել վանահօրն վանուց Որոտնայ վասն տեղեկութեան, իսկ ի Նահանգապետէն վերստին ինդրել առնել զիւրն տնօրէնութիւն յատկացուցանել տալով զյիշատակեալ որքանութիւն գետնոյն (30 դեսեատին) ի կառավարութիւն վանուցն, և զյետեանացն կարգադրութեանն իւրոյ յայտ առնել Սինօղիս վասն տեղեկութեան:

Ի 27 յունիսի 1879 ամի. Համաձայն մակարրութեան Վեհափառ Կաթուղիկոսի վերաբարձուցմամբ վեցեսին Կոնդակաց տուելոց յերջանկայիշատակ Մատմէոս Կաթուղիկոսէ և ի ներկայ Վեհափառ Հայրապետէ, և զմկայականն, տուեալն ի Տեղապահ Դուկաս Արքեպիսկոպոսէ պատուիրել Հոգեոր կառավարութեանն Նախիջեանու կոչեալ յատեան իւր զԹագէոս քահանայ Տէր Գասպարեան և զՄկրտիչ քահանայ Սարգսեան, և յանձնել նոցա զկոնդակու և թոյլատրել կրել զպարգեսն ի նշանակեալ աւուրու:

Ի 27 յունիսի 1879 ամի. Համաձայն ինզրոյ Գարրիէլ քահանայի Ֆիւնեան պատուիրել Կոնսիստորիային Հայոց Տիֆիսու հաստատել զնամիարան յեկեղեցւոց Նորաշինու Սուրբ Ըստուածածնի եկեղեցւոյն տեղւոյն, յանձնելով նմա ի հովուութիւն և զժողովրդականս հանգուցեալ Սրապիօն աւագ քահանայի որպէս և արդէն տնօրինեալ է Կոնսիստորիայն:

Ի 27 յունիսի 1879 ամի. Առ ի կարճելոյ զանբաւականութիւն քահանայից զմիմեանց և չտալ տեղի գայթակղութեան ժողովրդեան հրամանագրել Հոգեոր Կառավարութեան Տաթևու պարտաւորել զՄիմէօն քահանայ Փիրումեան շմբանեալ բնաւ ի հովուութիւն ժողովրդեան Շինուհայրու, այլ միայն բաւականանալ հովուութեամբ ժողովրդեան Երեցաթումը գեղջ յորոյ վերայ և ձեռնալրեալն է, իսկ զժողովուրդն Շինուհայրու հաւասարապէս բաժանել ընդ մէջ Հայրապետ և Յակոբ քահանայից տեղւոյն: